ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԵՎԱ

ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴԻ ԿԵՐՊԱՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

Արշակի ազգային մտածողությունն ու զուտ մարդկային հոգեբանությունը հնարավորինս ամբողջական և համակողմանի բացահայտելու համար անհրաժեշտ է նրան ներկայացնել ոչ միայն V դարի հայ պատմագրության համատեքստում՝ նկատի ունենալով ներքին ու արտաքին քաղաքական, սոցիալական անցուդարձերը, այլև գեղարվեստական երկերի զուգահեռներում: Անշուշտ, Արշակի կերպարը տարբեր դարաշրջաններում ընկալվել է նորովի՝ պայմանավորված և՛ ժամանակի պահանջներով, և՛ պատմող-հեղինակի, գրողի սուբյեկտիվ վերաբերմունքով: Ռաֆֆին, ավելի ուշ՝ Ստ. Զորյանը, Պ. Զեյթունցյանը, Լ. Խեչոյանը, վերապահությամբ ընդունելով պատմիչների հաղորդումներն ու վերանայելով նրանց տեսակետներն ու գնահատականները, փորձել են նոր լույսի ներքո քննել Արշակի ազգային-անհատական մտածողությունն ու հոգեբանության՝ հակասականություն դրսևորող շերտերը, IV դարի հասարակական հարաբերությունները, ներքին ու արտաքին քաղաքականությունը, ինքնուրույն պետություն կառուցելու ծրագիրը:

Հայտնի է, որ 350-ական թվականներին Հռոմը և Պարսկաստանը, զբաղված սեփական սահմանների պաշտպանության խնդրով, ժամանակավորապես չեն միջամտում Հայաստանի ներքին գործերին: Մոտ մեկ տասնամյակ Հայոց աշխարհը բարգավաճում է, հզորանում: Բուզանդը դրական է արտահայտվում Արշակ Երկրորդի գահակալության առաջին տարիների մասին: Նա վարում է ազգանպաստ, կշռադատված քաղաքականություն. կարճ ժամանակում բարեկարգում ու շենացնում է երկիրը, ամրացնում և հսկողություն է հաստատում Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Հրաշալի ըմբռնելով, որ ուժեղ պետություն կառուցելու գլխավոր նախապայմանը միաբանությունն է, համախմբում է հոր օրոք արքունիքից դժգոհ նախարարներին, ըստ արժանվույն պաշտոններ բաշխում Մամիկոնյանների, Գնունիների և այլ հայտնի տոհմերի ներկայացուցիչներին: Արշակը կարևորում է նաև կաթողիկոսի ընտրության հարցը՝ ձգտելով հոգևոր հայր տեսնել վստահելի մեկին. նա այդ պաշտոնի համար ընտրում է իր հավատարիմ սենեկապետին՝

Գրիգոր Լուսավորչի շառավիղներից Ներսեսին[1]: «Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս և զառաջինսն. մեծամեծքն յիւրաքանչիւր գահու, և գործակալքն յիւրաքանչիւր չափու«[2],- գրում է Բուզանդը:

Խորենացին հենց սկզբից անբարյացակամ վերաբերմունք է դրսևորում Արշակի նկատմամբ, քննադատում արտաքին քաղաքական դիրքորոշումը՝ նմանեցնելով կաղ ու սրագլուխ Թերսիտեսին[3]:

Արքունի զորաբանակը մեծացնելու, թագավորական իշխանությունը հզորացնելու, պետությանը սպառնացող նախարարական ավագանուն թուլացնելու և նրանց կենտրոնախույս հակումները սանձելու նպատակով Արշակը ծրագրում է հիմնել նոր, առավել ազատ ու հարկերից զերծ քաղաքներ: Առաջին քայլը Կոգովիտ գավառում Արշակավանի կառուցումն է: Ե՛վ Բուզանդը, և՛ Խորենացին մեծ զայրույթով ու կշտամբանքով են ներկայացնում Արշակի այս «խելահեղ» ձեռնարկումը: Պատմիչների ոչ բարեհաճ վերաբերմունքը թերևս պայմանավորված է նրանով, որ, լինելով հոգևորականներ, ենթարկվում են ժամանակի պաշտոնական մտածողությանը՝ չընդունելով կամ պարզապես չընդունելով քաղաքի կառուցման բուն նպատակը: Բուզանդը շրջանցում է այն կարևոր հարցը, թե հայոց թագավորն ինչո՛ւ է հանկարծ որոշում դաստակերտ կառուցել:

«Հայոց բերդը» վեպում, թեև Արշակի կերպարը չի հասնում մեծ ու խոր ընդհանրացման, և հոգեբանական շատ նրբերանգներ դեռևս մնում են չբացահայտված, այնուամենայնիվ, Ստ. Զորյանը ձգտում է տեսանելի և ըմբռնելի դարձնել Արշակի ծավալած գործունեության տրամաբանությունը: Հայոց թագավորը միակն է, որ երազում է ունենալ ազատ ու անկախ, օտարների բռնություններից ու լծից զերծ, նրանց կամքից ու ցանկություններից անկախ ինքնուրույն մի պետություն: Ժամանակի հեռավորությունը թույլ է տալիս գրողին նորովի գնահատելու և ներկայացնելու Արշակավանի կառուցման մանրամասներն ու նպատակը՝ դրանով իսկ նորովի վերարժևորելով Արշակ Երկրորդին: Վերջինիս քննադատող նախարարներն ու իշխանները, արքայահայր Տիրանը այս ձեռնարկումը համարում են սնափառության, ինքնիշխանության հաստատման ձգտում, սակայն, ինչպես նկատելի է վեպում, Արշակի երազանքը մեկն է՝ստեղծել մի բերդ, որն իր հզորությամբ կմիավորի հայոց նախարար-

---

1 Իհարկե, Ներսեսի ընտրության հարցում Արշակը հաշվի է առնում նաև Բյուզանդիայի կարծիքը:

2 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 106:

3 Թերսիտեսը Հոմերոսի «Իլիականի» մեջ հիշատակվող հասարակ զինվոր է, որ հանդգնում է քննադատել թագավորներին ու ավագներին, ինչի պատճառով էլ Ոդիսևսը նախատում ու ծեծում է նրան: Փաստորեն, Հոմերոսը ծաղրում և տգեղ արտաքինով է պատկերում ճշմարտախոս և անվախ Թերսիտեսին:

ներին և կլինի անխորտակ: Արշակը ձգտում է «բոլոր նախարարներին ենթարկել իրեն, կազմել մեծ բանակ և Հայոց աշխարհը պաշտպանել ամեն վտանգից»: Դարերի հեռավորությունը և հայ ժողովրդի անցած ճանապարհը մեկ անգամ ևս հաստատում են Արշակի այն կարևոր համոզմունքի ճշմարտացիությունը, որ պետք է ինքնուրույն, սեփական զորքով, ներքին բերդերով կռել հայոց երկրի ապահովությունը և ոչ՝ օտարին ապավինելով: «Ապավեն փնտրում են անկարներն ու հիվանդները, բայց ոչ քաջառողջ մարդիկ»[1],- ասում է նա և անհրաժեշտություն համարում Կոգովիտում ունենալ մի բազմամարդ քաղաք, որ արևելքից պաշտպանի երկիրը պարսից ոտնձգություններից: Այդ մասին, բնականաբար, նա չի կարող բարձրաձայնել՝ թշնամուց՝ Ծապուհից գաղտնի պահելու համար: Արշակավանի կառուցման անհրաժեշտությունը ընդգծվում է նաև Պ. Զեյթունցյանի վեպում, քանի որ քաղաքը խորհրդանշում է «ուժ, անկախություն, միասնություն»: Թշնամու անսպասելի հարձակման դեպքում Արշակը ստիպված չի լինի նախարարներից օգնություն խնդրել:

Նկատելի է, որ հայ նախարարների գործելակերպը պայմանավորված է եղել անձնական հետաքրքրություններով: Քանի դեռ Արշակը իր կառուցողական ծրագրերով չի դիպչում նրանց շահերին, նրանք անտարբեր են կամ ձևականորեն թագավորի կողքին (չհաշված մի քանի նախարարների): Բավական է՝ որևէ ձեռնարկ խախտի սեփական հողատարածքների սահմաններն ու հարվածի նրանց իշխողական նկրտումներին, թեկուզև ազգի ու պետականության ամրապնդման ու հզորացման համար, անմիջապես հանդիպում է խիստ քննադատության, նույնիսկ հակահարվածի: Լ. Խեչոյանի վեպում Արշակը ավելի քան համոզված է, որ «ժողովուրդ-պետություն դառնալու համար» հույսները չպիտի դնեն նույնիսկ դավանակից կամ որևէ այլ ուժի վրա: «Մենք պիտի կարողանանք մեր պատերազմը ինքներս մղել,- ասում է նա:- Աշխարհի խաչմերուկին երբ ունենք մեր երկիր պետությունը, որի հետ հաշվի կնստեն՝ հավասարը հավասարի հետ...»[2]: Սակայն ո՞րն է ելքը. Արշակն ունի այս հարցի պատասխանը, սակայն, ցավոք, առայժմ միայն տեսականորեն. «Ճանապարհը զենքն է ու ոսկին, ելքը՝ միաբանությունը»[3]: Ժամանակակից մարդու տեսանկյունից Լ. Խեչոյանը այլ կերպ է ընկալում Արշակավանի կառուցումը: «Քայքայված, իր դեմքը կորցրած ու կողոպտված թագավորությունը վերականգնելու համար» Արշակը նախևառաջ ձգտում է՝ ստեղծել տնտեսական ազդեցիկ միջավայր, քանի որ պետության հզո-

---

1 Ստեփան Զորյան, Հայոց բերդը, Երևան, 1982, էջ 231:
2 Լևոն Խեչոյան, Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, Երևան, 2002, էջ 167:
3 Նույն տեղում, էջ 140:

րացման առաջին նախապայմանը զորեղ և կայուն տնտեսություն ունենալն է: Կառուցելով քաղաքը աշխարհագրական այն վայրում, որտեղ խաչվում են հզոր պետությունների տնտեսական շահերը, Արշակը ձգտում է ունենալ մի հենակետ, որտեղ կհանգրվանեն այլ երկրներից եկող և Պարսկաստան մտնող առևտրական քարավանները. Պարսից աշխարհը ստիպված կլինի հարկ վճարել ճանապարհը բացելու համար: «Պարսից և Բյուզանդական աշխարհները առևտրի մեջ մտցրել են մենաշնորհ, ծախում են իրենց ավելցուկը, գնում են ամենալավը և մեր ապրանքին իրենք են նշանակում գներ, մեր երկրից դուրս են տանում ոսկին: Կառուցվող քաղաքը կստիպի մեր հարևաններին սթափվել»[1],- ասում է Արշակը:

Բերդը կառուցելու համար Արշակի դիմումը հայոց նախարարներին մնում է անպատասխան: Հայրացած վերջիններիս եսակենտրոն դիրքորոշումից՝ Արշակը արձակում է բոլորի համար անսպասելի հրաման: Անհանգստացած սեփական ունեցվածքի, իրավունքների պահպանման, իրենց տիրույթներից փախչող գյուղացիների խնդրով՝ նախարարներից ոմանք պատրաստակամություն են հայտնում զենքի դիմելու, նույնիսկ հնազանդվելու Ծապուհին: Խորենացին նշում է, որ հայոց նախարարները, Ծապուհին դիմելուց հետո հարձակվելով Արշակավանի վրա, բացի ծծկեր երեխաներից, սրի են քաշում տղամարդկանց ու կանանց, հիմնիվեր ավերում քաղաքը: Ներսես Մեծի միջնորդությամբ արքունական և նախարարական զորքերի միջև հաստատված զինադադարից հետո արքայի հրամանով սպանվում են այն նախարարները, որոնք ավերել էին տարիների ջանքերով կառուցած Արշակավանը, խորտակել արքայի՝ երկիրը ամրացնելու և հզորացնելու երազանքը: Խորենացին խտացված գույներով է նկարագրում Կամսարական տոհմի բնաջնջումը՝ մեղադրելով և ընդգծելով Արշակի դաժանությունը: Կամսարականների նկատմամբ գործած Արշակի անողոք հաշվեհարդարը Հորյանը փորձում է եթե ոչ արդարացնել, ապա մեկնաբանելի դարձնել: «Թող մեռանի մի տոհմ, երկու տոհմ դավաճանների, որպեսզի երկիրը չմեռանի, որպեսզի երկիրը հայրենի մնա ողջ... Խառնակիչների ազգատումը, անիշխանության խորտակումը Հայոց աշխարհին կբերի խաղաղություն...»[2],- ասում է Արշակը «Հայոց բերդը» վեպում:

Ռաֆֆին «Սամվել» վեպում Արշակի մենախոսությամբ ընկալելի է դարձնում այն հակասություններն ու տարաձայնությունները, որոնք ծագել էին նախարարների և թագավորի միջև. վերջինիս եզրակացությու-

---

[1] Նույն տեղում, էջ 210:

[2] Ստեփան Հորյան, Հայոց բերդը, Երևան, 1982, էջ 432:

նը հստակ է. «Ես ավելի բարձր էի դասում Հայաստանի ամբողջությունը, քան հարյուրավոր առանձնացած իշխանություններ»[1]:

Բուզանդի գրքում առհասարակ չի հիշատակվում, որ Արշակավանը կործանում են հայոց նախարարական տները՝ Կամսարականի գլխավորությամբ, և Արշակը վրեժ է լուծում[2]:

Խեչոյանը հոգեբանական նուրբ երանգ է նկատում Արշակի՝ թևաթափ եղած, հուսալքված, բայց չկոտրվող մարդկային տեսակի մեջ: Կործանված քաղաքը պիտի նորից վերակառուցել, թեկուզ՝ ձևականորեն. «Արքունի քաղաքի պատերին օրական գոնե մի քար պիտի դրվի, ու ժողովրդի ականջը մուրճի հարվածի ձայն պիտի լսի, որ երկիրը տեսնի ու հավատա թագավորի անպարտելիությանը»[3]: Ցավոք, հայոց արքային չի հաջողվում իրագործել իր երազանքը՝ ստեղծել ազատ ու ինքնիշխան, միաբան ու հզոր մի երկիր, որ կարող էր իր իսկ ուժերով կանգուն մնալ: Փաստորեն, դեռևս IV դարում Արշակ Երկրորդը ուրվագծել է այն Հայաստանը, որ աշխարհի պետությունների կողքին կկանգնի հավասարազորի կեցվածքով, կասի սեփական խոսքը, որտեղ մարդիկ կապրեն ազատ, հավասար իրավունքներով, առանց հարկերի և տերերի: Գրողները նկատում են Արշակի երազանքի իրական արժեքը, թափած ջանքերը և ժամանակի հեռավորությունից բարձր են գնահատում նրա՝ Արշակավանի տեսքով նոր Հայաստան կառուցելու գաղափարը:

Արշակի ներքին բախումների մյուս օղակը կազմում է հոգևորականությունը: Հայոց թագավորի և հոգևոր դասի, մասնավորապես Ներսես Մեծի առճակատումը ծագում է ոչ այնքան գաղափարական տարաձայնություններից, որքան երկուստեք իշխելու ձգտումից: «Խնդիրը կատարյալ տնտեսական էր, կատարյալ տիրապետական էր,- գրում է Ռաֆֆին:- Այստեղ մրցում էին հոգևոր և մարմնավոր իշխանությունները»[4]: Եկեղեցին ամենամեծ ավատատերերից էր, տնտեսապես հզոր կառույց, որ հաճախ միջամտում էր քաղաքական ու պետական գործերին, կայացնում որոշումներ՝ իր իշխանությունը տարածելով ամենուր: Բնականաբար, հայոց թագավորի կողմից եկեղեցու տնտեսական իրավունքների սահմանափակման յուրաքանչյուր փորձ պիտի հանդիպեր դիմադրության: Ուշագրավ է՝ Արշակի՝ քրիստոնեական օրենքներից խոտորվելու մեջ Ներսեսի մեղադրանքի հիմքը առավելապես սոցիալ-տնտեսական էր: Պատմիչները, կողմնակալ լինելով և իդեալականացնելով Ներսեսին,

---

1 Ռաֆֆի, Սամվել, Երևան, 1986, էջ 210:

2 Ըստ Բուզանդի՝ Աստված պատժում է Արշակին. Արշակավանը կործանվում է ժանտախտից:

3 Լևոն Խեչոյան, Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, Երևան, 2002, էջ 268:

4 Ռաֆֆի, Սամվել, Երևան, 1986, էջ 170:

դժգոհում են Արշակից՝ հայրապետի խորհուրդները չլսելու համար: Դարերի հեռավորությունը թույլ է տալիս գրողներին՝ ավելի սթափ և ռեալ գնահատելու Արշակ-Ներսես հարաբերությունները: Ներկայացնելով Ներսես Մեծի և նախարարների երկխոսությունը՝ Լ. Խեչոյանը բացահայտում է IV դարի Հայաստանի ճշմարիտ պատկերը, հայոց բարձրաստիճան այրերի, ժողովրդի հոգեբանությունը և այդ համապատկերի վրա ուրվագծվող Արշակի ողբերգության ողջ դրամատիզմը: Փոխադարձ մեղադրանքները մերկացնում են և՛ հոգևորականներին, և՛ նախարարներին: «Հայրապետ,- ասում է Գադիշո նախարարը,- խռովահույզ նախարարները Ներսես կաթողիկոսի լռելյայն համաձայնությամբ և նրա գիտությամբ չէ՞ր, որ նետվեցին Արշակավան քաղաքի վրա՝ ինչո՞ւ: Որովհետև Կամսարական Ներսեհն ու Ներսես կաթողիկոսը չէին կարող հանդուրժել օրըստօրե կառուցվող ու ծավալվող քաղաքի գոյությունը՝ իրենց հողերին այնքան մոտիկ... Կամսարականների Երվանդաշատ և եկեղեցուն պատկանող Բագավանը, որոնք խոշոր առևտրական հանգույցներն են Հայաստան աշխարհի, Արշակավանի հիմնադրումով կկորցնեին իրենց նշանակությունը: Այնպես որ, Արշակ թագավորի խոշորագույն տնտեսական ծրագրերը հարվածում էին ոչ միայն Պարսից աշխարհին, այլ նաև մեր երկրի ներսում հատուկ նպատակներ ունեին»: Փաստորեն, Արշակի նպատակն էր թուլացնել եկեղեցու իշխանությունն ու հզորությունը, նրանից ստանալ տաճարներից բռնագրաված ոսկին՝ պետության ջլատված ուժերը վերականգնելու, ամուր բանակ ստեղծելու, սահմանապահ ամրություններ կառուցելու համար:

Ուշագրավ է Բուզանդի գրքում հիշատակվող այն փաստը, երբ Արշակը իբրև ազգային արժանապատվության ոտնահարում է ընկալում Ներսեսի՝ Վաղեսի կողմից աքսորվելու[1] լուրը և հրամայում ավերել ու ավարել հունաց սահմանամերձ տարածքները: Այս դիպվածի մասին ժամանակակից գրողի ընկալումը բոլորովին այլ է. Արշակը ժամանակավորապես երկրից հեռացնում է Ներսեսին՝ ժողովրդին ու նախարարներին իր ձեռքը հավաքելու և կենտրոնացնելու նպատակով: «Մեր ժողովուրդը մեկ տեղ չի գալիս, բուռ չի հավաքվում»[2],- ասում է նա: Հատկանշական է, սակայն, որ Արշակն ու Ներսես Մեծը, հաճախ հակադրվելով միմյանց, նույնիսկ սուր բախումներ ունենալով, երկուստեք հարգում ու գնահատում են իրար՝ իբրև Հայոց աշխարհի կարևորագույն դեմքերի: Ներսեսը, օրինակ, քննադատելով Արշակի բազմաթիվ ձեռնարկումներ ու քայլեր, այ-

---

1 Ներսեսը մի քանի բարձրաստիճան այրերի հետ մեկնում է Բյուզանդիա՝բանակցելու կնքված խաղաղության դաշինքի առիթով:

2 Լևոն Խեչոյան, Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, Երևան, 2002, էջ 117:

նուամենայնիվ, մերժում է պարսկամետ նախարարներին՝ մատնանշելով Արշակի հայրենանվեր գործունեությունը հայրենի հողի ու հավատի համար:

Արշակի բնավորության այլ դրսևորումների հանդիպում ենք Արշակ-Գնել-Տիրիթ-Փառանձեմ փոխհարաբերություններում: Պատմիչները հավասարապես մեղադրում են Արշակին Գնելի սպանության և այլ մեղքերի մեջ: Հայոց թագավորը, հավատալով եղբորորդու՝ Տիրիթի բանսարկություններին[1], հրամայում է սպանել Գնելին: Բուզանդը Ներսեսի միջոցով այպանում ու քննադատում է Արշակին. «...Դու խցեր զականջս, և կափուցեր զլսելիս, զի մի՛ լուիցես զօգտակարս բարբառոց զաստուածեղէն բանիցն խրատուն, այլ զգազանաց առեալ զբարուցս, սկսար լինել մարդախանձ... Այլ դու, Արշակ, փոխանակ զի զգործս Կայէնի գործեցեր, զանէծսն Կայէնի զգեցջիր...»[2]:

Խորենացին Արշակ Երկրորդին ներկայացնում է ավելի մռայլ գույներով: Տիրիթի բամբասանքներից հետո Արշակը խեղդամահ անել է տալիս հորը, սպանում Գնելին և իր արածի համար բոլորովին չի զղջում, «այլ անամօթեալ, ագահելով ի գանձս սպանելոյն և ի ժառանգութիւն՝ յաւել առնուլ զկին նորին զՓառանձեմ, յորմէ եղև պատանի մի, որ անուանեցաւ Պապ»[3]:

Ստ. Զորյանը նույն եղերական իրադարձությունը ներկայացնում է փոքր-ինչ այլ տեսանկյունից: Տիրիթի բանսարկություններն իսկապես խռովում են Արշակի հոգին, կասկած գցում նրա սիրտը, սակայն հայոց արքան այնքան էլ միամիտ չէ, որ առանց համոզվելու, առանց փաստարկումների հրամայի հարազատ մարդու արյուն թափել: Բացի այդ Արշակը երբեք բացեիբաց չէր անի այնպիսի քայլ, որն արատավորեր իր անունը և հեղինակությունը: Նա Նավասարդի տոների առթիվ Ծահապիվան է հրավիրում Գնելին՝ զրուցելու՝ հընթացս ստուգելու իր կասկածները: Սակայն Տիրիթը սպանում է հորեղբորորդուն՝ ասելով. «Թագավորի հրամանով»: Զորյանի ընկալումը հստակ է. Արշակը այսպիսի բացահայտ սպանության հրաման չէր կարող արձակել: Ժամանակի հեռավորությունը թույլ է տալիս գրողներին՝ առավել ուշադիր քննելու և հասկանալու Արշակի քայլերի տրամաբանությունը: Լ. Խեչոյանի վեպում հայոց թագավորը, գնահատելով Գնելի՝ բյուզանդական կրթությունն ու դիվանագիտական կարողությունները, մտադրվում է ուղարկել նրան Բյուզանդիա՝ քաղաքական որոշակի խնդիրներ կարգավորելու առաքելությամբ: Սակայն այստեղ ևս գործում մասնակցություն ունենում և խնդի-

---

1 Ըստ Տիրիթի՝ Գնելը մտադրություն ունի թագավորելու և Արշակին սպանելու:

2 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 188:

3 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 344:

ը շուտափույթ լուծում են շրջապատի որոշ մարդիկ՝ առաջնորդվելով սեփական շահերով: Առավել ինքնատիպ է Պ. Զեյթունցյանի մոտեցումը. Գնելը կենդանի է մնում. նրա փոխարեն սպանվում է ծպտված ծառան: Ըստ Զեյթունցյանի՝ Գնելի մահվան (թեկուզև ծառայի տեսքով) գլխավոր մեղավորը Արշակն է: Գրողը մեծ վարպետությամբ բացահայտում է հայոց թագավորի ներաշխարհն ու հոգեբանական խրթին ու ծանր ապրումները, մահվան հրամանն արձակելուց առաջ և հետո ունեցած դրամատիկական պահերը: Արշակը համոզված է, որ սպանել է տալիս ոչ թե իր եղբոր որդուն, այլ անդեմ ու անանուն մի թշնամու, որ «գալիս է գահը խլելու ոչ թե հանուն երկրի, այլ փառասիրության, գալիս է առանց ծրագրերի, առանց հղացումներ...»[1]: Արշակը փորձում է արդարացնել իրեն, սակայն սա համոզմունք չէ, այլ ավելի շատ՝ ինքնախաբեություն, քանի որ հրաշալի հասկանում է՝ աշխարհում չկա մի գաղափար, որի անունից կարելի է զոհել մարդու կյանքը: «Եվ որքան մեծ են գաղափարն ու նպատակը, այնքան էլ պետք է բացառվի սպանության հնարավորությունը: Իսկ եթե սպանությունն անխուսափելի անհրաժեշտություն է, ուրեմն, գաղափարներն ու նպատակները փտած են ներսից, ուրեմն ինչ-որ բան էն գլխից կարգին չէ...»[2]: Հոգին կրծող զգացումը մշտապես ուղեկցում է, երբ համոզված չես, նույնիսկ կասկածում ես հակառակորդիդ մեղավորությանը: Զեյթունցյանը բացում է Արշակի հոգեկան տառապանքների ողջ նրբերանգները՝ փորձելով ապացուցել, որ եթե անգամ Գնելին սպանելու հրամանը արձակվել է Արշակի կողմից, ապա դա չի եղել սոսկ իշխող տիրակալի քմահաճույք կամ հեշտությամբ արտաբերված հերթական հրաման: Նա շարունակ ներքին պայքար է մղել ինքն իր դեմ: Հանուն երկրի ներկայի ու ապագայի՝ գիտակցաբար կորցրել է մարդկային դեմքը, գործել է այնպիսի արարքներ, որոնք դեմ են եղել իր բնությանն ու սկզբունքներին: Ուրեմն, Արշակի՝ թագին կառչելու բոլոր ջանքերը պայմանավորված էին միմիայն երկրի շահերով: Առաջադրած գաղափարական եզրահանգումը այսպես է հնչում Լևոնյանի վեպում. «Թագը ժողովուրդ է, ժողովուրդը՝ հող, հողը՝ թագավոր: Իսկ լավ թագավորը՝ ժողովրդի արժանապատվությունը»[3]:

Ռաֆֆու վեպում առավել ընդգծվում է հայրենիքի շահերով առաջնորդվող հերոսի դասական ընկալումը. Նա պատրաստ է զոհողությունների, միայն թե արդյունքում շահի պետությունը: Դրաստամատի՝ որևէ կերպ փրկվելու և Հայաստան վերադառնալու ակնարկին Արշակը պատասխանում է. «...Իմ այստեղից ազատվելը, Հայաստան գնալը և կրկին

---

1 Պերճ Զեյթունցյան, Արշակ Երկրորդ, Երևան, 1977, էջ 153:

2 Նույն տեղում, էջ 202:

3 Լևոն Խեչոյան, Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, Երևան, 2002, էջ 218:

իմ կառավարության գլուխը անցնելը... ես մինչև անգամ վնասակար եմ համարում: Ինչո՞ւ: Որովհետև ես չի պիտի կարողանամ հաշտվել իմ նախարարների հետ, իսկ այդ հայրենիքի փրկության համար անհրաժեշտ է... Ես կմնամ այստեղ. ես կզոհեմ ինձ հայրենիքի խաղաղությանը: Թո՛ղ իմ նախարարները հաշտվեն իմ որդու հետ... Թո՛ղ Հայոց երկիրը ազատ լինի, այնուհետև իմ տանջանքները կթեթևանան այդ մթին բանտում»[1]:

Պատմիչները շարունակում են մեղադրական ու ժխտողական դիրքորոշմամբ ներկայացնել Արշակի հետագա քայլերը: Բուզանդը վերջինիս ցուցադրում է առավել վատթար գծերով. առանց ամոթի և մեղքի զգացումի Արշակը հրամայում է ողբալ ու սգալ մեռած եղբորորդու՝ Գնելի համար՝ անձամբ կեղծ արտասուք թափելով սեփական զոհի վրա: Սգահանդեսի պահին Արշակը կրքոտ հայացքներ է նետում սիրելի ամուսնու կորուստը ողբացող գեղեցիկ Փառանձեմին և որոշում տիրանալ նրան: Հոգեբանորեն գուցե համոզիչ է Արշակի պահվածքը. մարդասպանը խղճի խայթ չի զգում, երբ համոզված է, որ ինքն իրավացի է, իսկ արարքը՝ արդարացված: Սակայն ճշմարտությունն ի հայտ է գալիս. Արշակը խորապես զղջում է և որպես մեղքերի քավություն՝ հրամայում սպանել բանսարկուին: Պատմագրության այս հատվածը հիմք ընդունելով՝ Զեյթունցյանը դարձյալ հայոց թագավորին տանում է տառապանքի ուղիներով՝ վիճելու ինքն իր հետ, առաջ քաշելու ինքնաժխտման հարցերը և գտնելու ծառացած բազմաբարդ հարցերի պատասխանները: Հնչում են դարերի կենսափորձով հաստատված ճշմարտություններ. թագավորները գրեթե միշտ միայնակ են, երբեք չեն գնահատվում: Մարդիկ յուրաքանչյուր դժբախտություն կամ անհաջողություն վերագրում են թագավորին: Սա միակ պաշտոնն է, որ իր «հսկայական մեծությամբ ոչ ոքի վրա չի նստում... Փորձում ես վերածնել քո մարմնին համապատասխան, և նա անմիջապես նոր մարդ է փնտրում ու փախչում քեզանից»[2]: Ուրեմն, թագավորի ցանկացած վճիռ հենց սկզբից դատապարտված է քննադատության և մերժողական վերաբերմունքի:

Ինչևէ, Արշակի հաջորդ քայլը՝ ամուսնությունը Փառանձեմի հետ, երջանկություն չի բերում, ընդհակառակը, նա արհամարհվում ու անտեսվում է կնոջ կողմից: Տեսնելով կնոջ բացահայտ ատելությունը՝ Արշակը, ըստ Բուզանդի, հակադարձ քայլ է կատարում. ամուսնանում է կայսերական տոհմից մեկի՝ հույն Ոլոմպիի հետ: Այդ քայլով նա երկու խնդիր է լուծում. դիվանագիտական հարաբերություններ է ստեղծում Հունաց աշխարհի հետ և միաժամանակ վրեժ լուծում իրեն արհամարհող կնոջից: Նշենք, որ Արշակի ամուսնության հետ կապված դեպքերի հաջոր-

---

1 Ռաֆֆի, Սամվել, Երևան, 1986, էջ 223:

2 Պերճ Զեյթունցյան, Արշակ Երկրորդ, Երևան, 1977, էջ 184:

դականությունը Խորենացին ներկայացնում է այլ կերպ. ըստ պատմահոր՝ Փառանձեմը Արշակի ոչ թե առաջին, այլ երկրորդ կինն է:

Ստ. Զորյանը «Հայոց բերդ» վեպում Փառանձեմ թագուհու և Արշակ Երկրորդի կերպարները նոր լույսով՝ ազգային-հայրենասիրական կողմով բացահայտելու նպատակով այլ կերպ է ներկայացնում Օլիմպիա թագուհու մահը. Փառանձեմին չի վերագրում սարսափելի մի մեղք, ինչը տեսնում ենք պատմիչների գործերում: Արշակն արդեն ամուսնացած էր Օլիմպիայի հետ, երբ հանդիպում է այրիացած Փառանձեմին: Գնելի մահից հետո որոշ ժամանակ արքունիքում ապրող Փառանձեմին Արշակը, Օլիմպիան և արքունի բարձրաստիճան կանայք փորձում են մխիթարել: Զրույցների ընթացքում Արշակը այդ չքնաղ կնոջ մեջ տեսնում է խորհրդավոր մի ուժ, խիզախ հոգի: Փառանձեմը ողջունում և քաջալերում է ավանի կառուցման գաղափարը, մի բան, որի կարիքը Արշակը անչափ զգում է: Արշակի՝ Փառանձեմի նկատմամբ տածած զգացմունքի ներքին զարգացման ընթացքը այնքան էլ տեսանելի չէ, սակայն Զորյանի նպատակն այլ է. հայոց թագավորը Փառանձեմի մեջ տեսնում է ոչ միայն գեղեցիկ կնոջ, այլ նաև մարդու, որը հոգեկան սատար կլինի իրեն՝ ազատ և ինքնուրույն երկիր կառուցելու ճանապարհին:

Խորենացին շարունակում է քննադատաբար ներկայացնել Արշակի քաղաքական գործունեությունը: Վաղեսին հղած նամակում և Պահլավիկ Ալանավոզանին ուղղած պատգամում Արշակը դրսևորում է մորթապաշտություն և վախկոտություն. «... Այլ արդ՝ թուլացո՛ ինձ ղօղել ուրեք վայրկեան մի ժամանակի, մինչև ոգի առեալ՝ անցանել կարացից յերկիրն Յունաց. և դու կալցես զաշխարհս, և բազմաց յինէն հանդիպեսցիս բարութեանց, որպէս ի մտերիմ հարազատէ»[1]: Փոքրոգի ու վախկոտ մարդուն հատուկ այս մտքերը տարակուսանքի տեղիք են տալիս: Արշակ-Ալանավոզան հարաբերությունը ոչ միայն իսպառ բացակայում է Բուզանդի Պատմության մեջ, այլև ներկայացվում է բոլորովին ուրիշ լույսի տակ: Ալանավոզանը մեկն է բազմաթիվ այն մարդկանցից, որոնք գլխավորում էին Հայոց աշխարհը ավերելու եկած զորագնդերը: Արշակը Վասակ Մամիկոնյանի աջակցությամբ 30 տարի արժանի հակահարված է տալիս թշնամու՝ իրար հաջորդող բանակներին, այդ թվում և Ալանավոզանին. «...Գայր հասանէր ընդ առաջ զօրացն Պարսից. հարկանէր կոտորէր զամենեսեան առ հասարակ. և զմնացեալսն փախստեայս առնէին յերկիրն Պարսից. և ինքեանք զգուշանային սահմանացն իւրեանց»[2]:

---

[1] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 362:

[2] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 236:

Բուզանդի գրքում բացակայում է նաև Արշակի հաջորդ անպատվաբեր քայլը՝ Փառանձեմին Պարսից երկիր կանչելը, որի մասին գրում է Խորենացին: Զարմանալի է՝ հայոց պատմության մեջ իր դերն ու կշիռն ունեցած Արշակ Երկրորդի ձեռնարկած որևէ գործ, մարդկային որևէ հատկանիշ չեն արժանացել Խորենացու դրվատանքին: Պատմահայրը մեծագույն սիրով ու ակնածանքով է խոսում հատկապես այն թագավորների մասին, որոնք մարտնչել են հայրենիքի անկախության համար: Այս դեպքում փոքր-ինչ անհասկանալի է Խորենացու դիրքորոշումը. չէ՞ որ Արշակը ձգտում էր միավորել բոլոր նախարարներին և ստեղծել միասնական պետություն: Հիմք ընդունելով «Պարսից պատերազմ» ժողովրդական վիպերգը, Արշակին վերաբերող բազմաբղետ պատմությունները, Արշակավանի կառուցման իրողությունը, դրա շուրջ ստեղծված ներքին բախումները, ներհարազատական հակասությունները՝ Խորենացին՝ իբրև քրիստոնեական բարոյականությամբ առաջնորդվող անհատ, ճշմարիտ հոգևորական, չի ընդունում, ավելին, քննադատում է Արշակ Երկրորդի վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը. «Իսկ Արշակ և ոչ պատասխանի առնէ թղթոյն, այլ նշկահեալ արհամարհեաց զնոսա. (Վաղենտիանոս կայսեր թղթին). նա և ոչ զհետ Շապհոյ միտեցաւ ամենայն սրտիւ. այլ անձնահաճ եղեալ, պարծելով հանապազ ի գինարբուս և յերգս վարձակաց. քաջ և արի երևեալ քան զԱքիլլես իսկ արդեամբք Թերսիտեայ նմանեալ կաղի և սրագլխոյ. վտարանջեալ յիւրոց նախագլխացն, մինչև զամբարտաւանութեանն ընկալաւ վարձս»[1]: Պատմահայրը անընդունելի է համարում այն փաստը, որ Արշակը կարող է միաժամանակ մերժել երկու հզոր պետությունների առաջարկները: Խորենացու Պատմության մեջ հայոց թագավորը ներկայանում է միակողմանիորեն, միայն բացասական հատկանիշներով ու արարքներով:

Ի տարբերություն Խորենացու՝ Բուզանդի գրքում Արշակն ունի նաև դրական գծեր, որոնք արժանի են ուշադրության, ըմբռնումի, գնահատման: Հայոց թագավորը երբեմն առանց կասկածելու հավատում ու վստահում է մարդկանց և կատարում չկշռադատված քայլեր, որոնք, ի վերջո, դառնում են նրա կործանման պատճառ: Արշակի արարքների ու գործողությունների տրամաբանությունը հաճախ թելադրվում է ոչ թե իր անձնական որոշումներով, այլ ստեղծված իրավիճակներով կամ շրջապատող մարդկանց՝ սեփական շահերից բխող խորհուրդներով: Այսպես, Արշակը թեպետ կամենում է շարունակել պատերազմը պարսից դեմ, սակայն Շապուհի հրավերից հետո, որ ուղարկվել էր վարազգիր մատա-

[1] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 334:

նիով կնքած աղով, Հայոց աշխարհի զորքը, նախարարները ստիպում են նրան գնալ, ներկայանալ Ծապուհին: Ուստի, կամա թե ակամա Արշակը ենթարկվում է նրանց կամքին և մեկնում է Տիզբոն: Զորյանը Արշակի այս քայլը փորձում է բացատրել հոգեբանորեն արդարացված: Ստանալով Ծապուհի հրավեր-նամակը՝ Արշակի գլխում առաջին հերթին այն ուրախալի միտքն է ծնվում, որ հարմար առիթ է ստեղծվում դավաճաններ Մերուժանին և Վահան Մամիկոնյանին բռնելու և պատժելու: «Եթե Ծապուհը Մերուժանին հանձնի ինձ, ես բարեկամություն կխոստանամ նրան,- մտածում է Արշակը:- Քանի տարի է՝ Մերուժանը խռովում է մեր երկրի խաղաղությունը և խուսափում է պատժից»[1]: Ծապուհի հապճեպ հրավերը կասկածելի է թվում շատերին, սակայն Արշակը հավատ է ընծայում նրան, քանի որ պարսից արքայի խոսքը կնքված էր զրադաշտականի համար նվիրական աղով: Բուզանդի ներկայացրած դեպքերի զարգացումից կարելի է եզրակացնել, որ Արշակը հաճախ գործում է ոչ իր կամքով, այլ հարկադրված՝ ենթարկվելով ժամանակի պաշտոնական մտածողությանը: Հայրենասեր, ազատասեր թագավորը պատրաստ է ցանկացած պահի հակահարված տալու թշնամուն (այդ են վկայում անընդմեջ պատերազմները Հունաստանի ու Պարսկաստանի դեմ), սակայն միայնակ, առանց սատարի ու աջակցության հեռու գնալ չէր կարող: Այստեղից էլ հերոսի երկփեղկվածությունը: Արշակի հոգեբանության հակասականությունը դրսևորվում է, երբ Ծապուհը հայոց հողով ու ջրով նրան ենթարկում է փորձության: Բուզանդը պատկերում է երկու Արշակի. մեկը՝ ստրկամիտ ու ենթարկվող, մյուսը՝ սեփական արժանապատվությունը գիտակցող իսկական արքա: Կանգնելով հայկական հողի վրա՝ Արշակը դառնում է համարձակ ու աներկյուղ. հայոց հողը ուժ ու զորություն է հաղորդում նրան: Այս պատկերն ունի առավել խոր ենթատեքստ: Հայոց հողն ու ջուրը խորհրդանշում են հայ ժողովրդի հերոսական ոգին, նախնիների անպարտելի ուժը. եթե ժողովուրդն իր սոցիալական բազմազան շերտերով միասնական լիներ ու ամուր թիկունք դառնար, Արշակի նման անհատը կկերտեր քաղաքական հարաբերությունների մեջ կշիռ ու տեղ ունեցող հայկական հզոր, անկախ պետություն:

Իսկապես, մեծ էր Արշակի դերը հայոց զորաբանակում, հիմնադրած ավանդները՝ կայուն: Այդ են վկայում հայոց զորքից ճողոպրած Ծապուհ արքայի զարմացական խոսքերը. «Եւ այսչափ ժամանակք են՝ զի Արշակ տէրն նոցա ‘ի նոցանէն կորուսեալ է, զի յԱնդմըշն բերդի կայ յերկրին Խուժաստանի, և նոքա առ գութն համարէին՝ թէ ‘ի գլուխ նոցա նա իբրև թագաւոր կայցէ, և կամ ընդ նոսա արդեւք ’ի մէջ գնդին կայցէ ‘ի գլուխ

[1] Ստեփան Զորյան, Հայոց բերդը, Երևան, 1982, էջ 459:

ծակատուն պատերազմին, և նոքա առ նմա առնիցեն պաշտօն յանդիման նորա»[1]:

Ուսումնասիրելով Բուզանդի, Խորենացու աշխատությունները, նրանց զուգակցելով Ռաֆֆու, Զորյանի, Զեյթունցյանի, Խեչոյանի վեպերը՝ հստակ տեսնում ենք ուրույն բնավորություն ու հոգեբանություն ունեցող հայրենասեր թագավորի, որի պայքարը երկրի միաբանության համար թեև առաջադիմական էր և բխում էր միմիայն պետության շահերից, սակայն, ցավոք, հաջողություն չի ունենում: Արշակը հանդգնել էր առաջ անցնել իր ժամանակից, սակայն, ինչպես նշում է Դրաստամատը, նա առաջ էր անցել միայն «գլխով, իսկ հոգով ու մարմնով կապված էր» իր ժամանակին «որպես բիրտ և դաժան մի բռնապետ»[2]: Արշակի ջանքերը՝ ստեղծելու ազատ ու անկախ պետություն, դատապարտվում են կործանման:

Այսպիսով, Արշակ Երկրորդը հայոց բազմաբարդ պատմության մեջ եղել է այն թագավորներից, որոնք արել են հնարավորն ու անհնարինը՝ ստեղծելու, կառուցելու ուժեղ և ինքնուրույն պետականություն ունեցող, միաբան ու հզոր մի երկիր, որ կարող է իր կշիռն ու դերն ունենալ մեծ աշխարհի բեմահարթակում: Կարծում ենք՝ հայ ժողովրդի համար դրամատիկ ժամանակաշրջանից 17 դար հետո՝ 21-րդ դարում, անհրաժեշտ է մեկ անգամ ևս քննել ու գնահատել Արշակի Երկրորդի արտաքին ու ներքին քաղաքականությունը և հարկ եղած դեպքում դասեր քաղել:

Բանալի բառեր. Արշակ Երկրորդ, հոգևորականություն, ուժ, անկախություն, միասնություն, ներքին ու արտաքին քաղաքականություն, ինքնուրույն պետություն:

---

1 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 310:

2 Պերճ Զեյթունցյան, Արշակ Երկրորդ, Երևան, 1977, էջ 530:

Мнацаканян Ева

Восприятие образа Аршака Второго во временной системе

Резюме

В истории армянского народа, прощедшего путь полной борьбы, отличается армянский царь Аршак Второй. Его национальное мышление и чисто человеческая психология в разных эпохах воспринималось по-новому, обусловлено и требованиями времени и автора-рассказчика и субъективным отношением автора. Раффи, позднее Ст. Зорян, П. Зейтунцян, Л. Хечоян с оговорками принимали передачи Хоренаци и Бузанда и пересматривая их точки зрения и оценки пробовали рассмотреть и раскрыть национально-индивидуальное мышление Аршака, слои, проявляющие противоречия психологии, общественные отношения 4-го века, внешнюю и внутреннюю политику, программу постройки самостоятельного государства в новом свете.

Ключевые слова - Аршак Второй, духовенство, сила, независимость, единство, внутренняя и внешняя политика, самостоятельное государство.

Mnatsakanyan Eva

Understanding Arshak the second's character during different time periods

Summary

The Armenian king Arshak the Second stands apart in the heroic history of the Armenian nation. His national thinking and humane psychologyhas been accepted in a new light in different time periods. This depended on the requirements of time and the subjective attitude of the narrators. Initially Paffi, later P. Zeytountsyan and L. Khechoyan spreaded light on Khorenatsi's and Bouzand's narrations and studied their opinions and appraisals. They tried to investigate Arshak's national–individual thinking and psychology, the existing controversies in them, the social relations in the fourth century, internal and external policy, and the plan to create an independent state.

Key words – Arshak the Second, priests, power, independence, unity, internal and external policy, independent state.